

թէ «Չտրտմութիւն մեծ բեկման Արեաց աշխարհին որ եհաս, եւ զթանձրամած խաւարն որ եհաս եւ մածեալ նստեր ի վերայ սրտիս իմոյ՝ համարձակապէս եւ արդար խաւսք Վահանայ եւ նուաճմանս անտոյժ փարատեալ զամենայն՝ մխիթարեալ ուրախացուցին զիս»: 2 Զրամայեր արձակել զատեանն: 3 «Եւ որ ինչ, ասէ, պէտք են ինձ եւ Վահանայ՝ այլ եւս բանից՝ խաւսիմք ար ըստ արէ, եւ աւուրս² քանի մի ուրախանամք առ միմեանս»: 4 Եւ այն ար իրամայեր Նիխոր Վահանայ՝ առ նմա ուրախանալ ամենայն նախարարաւքն ուխտակցաւքն եւ բովանդակ գնդան որ ընդ նմա էին. բայց զուխտանենզսն ի Զայոց եւ զուրացողսն հանին արտաքոյ ընթրեացն ամալթալիցս: 5 Եւ ուրախացեալք այն ար ըստ արիին մեծապէս ընթրեաց, եւ իրաժարեալք ի Նիխորոյ՝ գնացին հանգչել ի վանս իւրաքանչիւր:

6 Եւ ի վաղիւն ժողովեալ ամենայն բազմութիւն մարդկան ի հրապարակն՝ հրաման տայր Նիխոր, մինչդէռ ինքն առանձինն էր, զՄամիկոնեանն Վահան տանել ի ներքս ի սենեակ: 7 Եւ խաւսեցեալ ըստ ժամուն ընդ նմա միայն ընդ միայն զբազում³ ժամս զպէտս կարելոր իրաց աշխարհի, ըստ իշխանաց հոգողութեան՝ գային երկոքեան ի միասին ի տուն ատենին: 8 Զրաման տայր Նիխոր ամենայն եկելոցն ընդ Մամիկոնենին Վահանայ, նախարարաց եւ ռամկաց, մտանել յատեանն առ նոսա, եւ արանց Պարսիկ աւագաց զալ առ նոսա յատեանն: 9 Բայց զարսն, որ զինքեանս հաւատարիմս Պարսկացն կացուցանէին, հրաման առեալ նուիրակացն՝ եւ ոչ ի դուրսն մաւտել տային, ասելով, թէ «Գործոյ ինչ դուք չէք իմաստուն բանից, եւ լսել իսկ չգիտէք. արդ՝ գտեղի ատենին յարժանաւոր առնէ ընդէ՞ր խափանէք. զի թող նստի անդ մարդ այն՝ որ զխաւսս⁴ աւագացն եւ զբանս իմաստնոցն լսել գիտէ եւ աւգտել»:

10 Եւ էր այնուհետեւ տեսանել յայտնի Աստուծոյ արդարաքնին⁵ հատուցումն, սիրելի ուխտակատարացն իւրոց տալ զպարծանս եւ զհամարձակութիւն, եւ խաբէբայ ուրացողացն դասու զգեցուցանել զամալթ եւ զանարգանս. եւ գայր ի յատկութիւն բան Գրոյն ճշմարտապէս, թէ *Աստուած լոյս էա*: 11 Վասն որոյ ըստ նմին լուսաւորեալ ծագէին եւ երեսք աստուածասեր պաշտանէիցն իւրոց ըստ նմանութեան լուսոյն, զոր ընտրեցին ինքեանք եւ լուսաւորեցան: 12 Իսկ ի վերայ երեսաց մոխրապաշտացն նոյն կերպարան մոխրոյն իջեալ՝ նստեր ի վերայ ամբարշտացն, որով մերկացեալ դիմաւք՝

1 *ՁԱտ.* պէտք են ինչ եւ վահանայ

2 *ՏՏ.* յաւուրս

3 *Կամ ըստ Ձ.* ի բազում

4 *Ձ.* զխօս

5 *Ատ.* արդարաքնին

Ա Ա Յովհ. Ա 5